ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան **3**

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները **4**

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում 4
2. Սակագնային քաղաքականություն 6
3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում 10
4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ 11
5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում 14
6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն 16
7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ 18

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ոլորտային ծրագրերը **20**

1. Էներգետիկայի բնագավառ 20
2. Ջրային ոլորտ 23
3. Հեռահաղորդակցության բնագավառ 23

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ **28**

Նախաբան

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային համակարգում (գործունեության թույլտվությունների տրամադրման և սակագների սահմանման մասով) կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՀՀ օրենքներով և ՀՀ ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն
- ֆինանսական վերլուծության վարչություն
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն՝
  - իրավաբանական բաժին
  - լիցենզավորման բաժին
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
  - տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
  - ներդրումային ծրագրերի բաժին
- հեռահաղորդակցության վարչություն
  - կարգավորման քաղաքականության բաժին
  - ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժին
- սպառողների հետ կապերի բաժին
- տնտեսական բաժին
- անձնակազմի կառավարման բաժին

- հաշվապահական հաշվառման բաժին
- ներքին աուդիտի բաժին
- ընդհանուր բաժին

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի քննարկման և մշակման աշխատանքներին:

Մասնավորապես, 2013 թվականին գործարար միջավայրի բարելավման և վարչարարության ընթացքում կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող փաստաթղթերի և մի շարք գործողությունների կրճատման նպատակով, «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի հետ համատեղ փոփոխություններ կատարելու առաջարկություններ են ներկայացվել «Էներգետիկայի մասին», «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքների մասով, որոնք արդեն իսկ ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից: Նշված փոփոխությունների արդյունքում կրճատվել են էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և հանձնաժողովի

կողմից լիցենզիաների տրամադրման, սակագների սահմանման (վերանայման), ինչպես նաև պայմանագրերի գրանցման համար ամրագրված ժամկետները, հստակ կարգավորում են ստացել էներգետիկայի բնագավառում կարգավորման ոչ ենթակա գործունեության տեսակներ: Նշված փոփոխություններով պայմանավորված՝ հանձնաժողովի կողմից 2013 թվականին լրամշակվել և օրենսդրական նոր իրավակարգավորմանն են համապատասխանեցվել հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերը: Մասնավորապես, արդեն իսկ հաստատվել է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց միջև կնքված և էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցման կարգը, նաև համապատասխան փոփոխություններ և լրացումներ են իրականացվում էներգետիկայի բնագավառի լիցենզավորման կարգում, էլեկտրական էներգիայի (հզորության) և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության լիցենզավորման կարգում, էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի պայմաններում և էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգում:

Բացի վերը նշվածից, ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում համապատասխան փոփոխություններ կկատարվեն փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման (վերանայման) գործընթացը կանոնակարգող ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավական ակտերում:

Հեռահաղորդակցության ոլորտում գործարար միջավայրի բարելավման, այդ թվում՝ համապատասխան ընթացակարգերի պարզեցման և վարչարարության կրճատման նպատակով, փոփոխություններ են կատարվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում, որոնց արդյունքում հեռահաղորդակցության ոլորտում տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների ու ձայնային ծառայությունների մատուցման լիցենզիաների տրամադրման պարզ ընթացակարգը փոխարինվել է ծանուցման ընթացակարգով: Պարզեցվել է բարդ ընթացակարգով տրամադրվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման լիցենզիայի տրամադրման ընթացակարգը՝ նախկինում լիցենզիայի տրամադրման

համար սահմանված 6-ամսյա ժամկետը փոխարինվել է մինչև 23 աշխատանքային օրով: Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը մշակել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն ծանուցման պարտավորություն ունեցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու ծանուցման օրինակելի ձևաթուղթը և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման նոր կարգը: Միաժամանակ, հեռահաղորդակցության ոլորտում գործարար միջավայրի բարելավման նպատակով համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև ոլորտի կարգավորմանն առնչվող մի շարք իրավական ակտերում:

2014 թվականին հանձնաժողովը, համագործակցելով պետական կառավարման տարբեր մարմինների հետ, կշարունակի կատարելագործել հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող օրենսդրությունը: Դրանք միտված կլինեն հասարակության համար կարգավորման թափանցիկության ապահովմանը, սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառմանը, սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռմանը, ինչպես նաև մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակմանն ու կարգավորման գործիքների կատարելագործմանը:

2. Սակագնային քաղաքականություն

Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Ընթացիկ տարվա մայիսի 14-ին «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական և «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները հայտեր էին ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, բաշխման

և փոխադրման սակագները:

Հաշվի առնելով 2013 թվականի ապրիլի 1-ից հանրապետություն ներկրվող բնական գազի գնի թանկացումը, ինչպես նաև 2010-2012 թվականներին գազամատակարարման համակարգում իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման (շահույթի և մաշվածության տեսքով), ընդհանուր տնտեսության միջին աշխատավարձի աճի հետ կապված անձնակազմի միջին աշխատավարձի ավելացման անհրաժեշտությունը, գազամատակարարման ընդլայնման հետ կապված որոշ շահագործման և պահպանման ծախսերի փոփոխությունները, ինչպես նաև ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի փոփոխությունը, հանձնաժողովը վերանայել և սահմանել է սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, փոխադրման և բաշխման նոր սակագներ:

2014 թվականին նախատեսվում է գնահատել բնական գազի սպառողական խմբերի գործող դասակարգման առավելություններն ու թերությունները և աշխատանքներ իրականացնել բնական գազի սպառողական խմբերի դասակարգման, սակագնային համակարգի կիրառման այլ հնարավոր տարբերակների ուսումնասիրության և համապատասխան առաջարկությունների մշակման ուղղությամբ:

Սպառողներին վաճառվող բնական գազի սակագնի բարձրացումը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ անհրաժեշտություն առաջացրեցին վերանայել նաև էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի սակագները:

Հաշվի առնելով ջերմային էլեկտրակայաններին վաճառվող բնական գազի նոր սակագները, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի սակագնային մարժայի և մյուս ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, 2013-2014 թվականների էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության հաշվեկշռի վերաբերյալ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կանխատեսումները և հիմք ընդունելով էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները, ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի ու 2012 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված ներդրումների վերլուծության արդյունքները, էլեկտրաէներգետիկական համակարգի միջին աշխատավարձի ավելացման անհրաժեշտությունը, ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի փոփոխությունը և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2013 թվականի հուլիսի 7-ից

վերանայել է էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները:

Արդյունքում՝ 2013 թվականի հուլիսի 7-ից գործողության մեջ են մտել նոր սակագներ ինչպես արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների, այնպես և վերջնական սպառողների համար: Միաժամանակ, սահմանվել են «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկից արդյունաբերական նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագները:

Մինչև 2013 թվականի դեկտեմբերի 1-ը, հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, սահմանված կարգով կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

Հաշվի առնելով վերականգնվող էներգետիկայի բնագավառում ներդրողների հետաքրքրվածության աճը արևային էլեկտրակայանների նկատմամբ, այդ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի համար նախատեսվում է սահմանել հաստատուն սակագին, որը յուրաքանչյուր տարի կճշգրտվի՝ հայկական դրամի արտարժութային փոխարժեքի և սղաճի փոփոխություններով պայմանավորված:

Յուրաքանչյուր տարի՝ մինչև տարեվերջ, ուսումնասիրվում և հաստատվում են երկդրույք սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների կողմից հանձնա-ժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

2014 թվականին նախատեսվում է լրամշակել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց միջև փոխհարաբերությունների կարգը և երկդրույք սակագնային համակարգում էլեկտրական էներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրային հզորությունների սահմանման ժամկետները:

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից Իրանի Իսլամական Հանրապետության հետ իրականացվող գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց պայմանագրի շրջանակում էլեկտրաէներգետիկական համակարգի

ընկերությունների միջև փոխհարաբերությունները հստակեցնելու և կանոնակարգելու նպատակով նախատեսվում է մշակել ըստ այդ պայմանագրի արտահանվող էլեկտրական էներգիայի հաշվառման կարգը:

2013 թվականի փետրվար ամսին վարձակալության 8-րդ պայմանագրային տարվա համար սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով էր դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ բազիսային սակագներում հաշվի առնելու մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ինչպես նաև 2012թ. մանրածախ ջրամատակարարման ծավալների և այլ եկամուտների ուսումնասիրության և վերլուծության արդյունքներից, ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել է 170,256 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), որը շուրջ 3,8 դրամ/խմ-ով (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) պակաս է նախորդ տարվա համար սահմանված սակագնից: Միաժամանակ, սահմանվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագները:

Ելնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և «Երևան Ջուր» ՓԲԸ-ին մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների 2013 թվականի փաստացի գնահատականներից, 2014 թվականին նույնպես կճշգրտվեն ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման բազիսային սակագները:

Սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագների հաշվարկման գործընթացը կանոնակարգելու նպատակով նախատեսվում է մշակել «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության ծախսերի բաշխման և սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով, նախատեսվում է ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2014 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունները:

3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում

Լիցենզավորման գործառույթն առանձնանում է նրանով, որ թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարող ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը 2013 թվականի հունվարի 1-ից մինչ սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում էներգետիկայի բնագավառում տրամադրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման (վերականգնման)՝ 9, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 15 լիցենզիա: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տվյալների փոխանցման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցելու գործունեություն իրականացնելու վերաբերյալ եղել է 1 ծանուցում:

Բացի վերը նշվածից, էներգետիկայի բնագավառում ստացվել և բավարարվել է լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման 25 հայտ, ինչպես նաև լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը վարձակալության տրամադրելու, լիցենզիաների պայմաններում փոփոխություններ կատարելու, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելուն կամ բաժնետոմսը (բաժնեմաս) վաճառելուն համաձայնություն տալու 36 դիմում: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ստացվել և

բավարարվել է պարզ ընթացակարգով տրամադրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու 10 դիմում:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովում 2013 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում իրավական փորձաքննություն է անցել և գրանցում ստացել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման 180 պայմանագիր:

Կարգավորվող բնագավառներում գործունեության լիցենզիաների (թույլտվությունների) տրամադրման և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի իրավական փորձաքննության գործընթացը կշարունակվի նաև 2014 թվականին:

4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի ցուցանիշների պահպանման գործընթացին՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի միջոցով հանձնաժողովը մշտապես բարձրացնում է իր կողմից տարվող մոնիթորինգի աշխատանքների արդյունավետությունը:

Հանձնաժողովը էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն է ստանում սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Մասնավորապես, մշտական մոնիթորինգի են ենթարկվում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպառողների էներգամատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվում են առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով հրապարակվում է հանձնաժողովի վեբ կայքում:

2013 թվականի հունվարի 1-ից սկսել է գործել սպառողների սպասարկման որակի ցուցանիշների խախտման համար էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման ու օգտագործման կանոններով սահմանված՝ ավտոմատ տույժերի կիրառման համակարգը: Վերջինս սահմանում է, որ մատակարարը էներգամատակարարման ընդհատումների, սպառողների դիմումներին և բողոքներին արձագանքելու համար սահմանված ժամկետների, ինչպես նաև սպառողների իրավունքներին առնչվող՝ կանոններով ամրագրված մի շարք այլ ընթացակարգերի խախտման յուրաքանչյուր դեպքի համար վերջինիս վճարում է տույժ: Տույժի չափը համարժեք է սպառողի ծախսած՝ համապատասխանաբար էլեկտրական էներգիայի կամ բնական գազի միջին ամսական արժեքի 20%-ին (բայց ոչ ավելի, քան 2000 դրամը): Հաշվարկված տույժը նվազեցվում է սպառողի նախորդ ամսում ծախսած էլեկտրական էներգիայի կամ բնական գազի արժեքից՝ այդ մասին հատուկ նշում կատարելով վճարման փաստաթղթում: Տույժերի վճարման գործընթացը մատակարարի կողմից իրականացվում է ավտոմատ եղանակով՝ առանց սպառողի կողմից որևէ դիմում կամ փաստաթուղթ ներկայացնելու պահանջի:

Վերը նշված համակարգի ներդրումից հետո 2013 թվականի առաջին կիսամյակում էմերգամատակարարման ընդհատումների վերականգնման համար սահմանված ժամկետների խախտման համար կարգավորվող ընկերությունների կողմից արդեն իսկ

շուրջ 18000 սպառողների վճարվել է 16,5 մլն դրամի տույժ: Միևնույն ժամանակ, սպառողներին սահմանված ժամկետներում տույժեր չվճարելու և այդ մասին հանձնաժողով ոչ հավաստի տեղեկատվության ներկայացնելու համար ընկերությունները ենթարկվել են տուգանքի՝ 5 մլն ՀՀ դրամի չափով:

Հանձնաժողովն իր գործառույթների տիրույթում հետևողական քայլեր է ձեռնարկում ջրամատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների մոնիթորինգի ուղղությամբ: 2013 թվականին պարբերաբար ուսումնասիրվել են «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից հրապարակված գրաֆիկների ու փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Բացի այդ, հանձնաժողովը, տեղեկատվության հավաստիության ուսումնասիրության նպատակով, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող հանրապետության 93 համայնքներում հարցում է կատարել փաստացի ջրամատակարարման տևողության փաստացի ցուցանիշների վերաբերյալ, որոնց արդյունքները կամփոփվեն մինչև ընթացիկ տարվա ավարտը:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացին: 2013 թվականին իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ ընկերությունը որոշ դեպքերում չի պահպանել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման ժամկետները կամ այդ առնչությամբ հանձնաժողով է ներկայացրել ոչ հավաստի տեղեկատվություն: Նշված խախտումների համար ընկերությունը ենթարկվել է տուգանքի՝ 20 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

2014 թվականին հանձնաժողովը կշարունակի սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվության մոնիթորինգի աշխատանքները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված վարչարարությունը՝ իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարող ընկերությունների նկատմամբ:

5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում

Հանձնաժողովի գործառույթներից առանձնանում է նաև էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, ինչպես նաև ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրին, ինչպես նաև ամփոփում է ընկերության նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Ներկայումս էներգետիկայի բնագավառում հիմնական ներդրումներն իրականացնում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ները: «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի ներդրումային ծրագիրը միտված է Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի արդիականացմանը և հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, իսկ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների ներդրումային ծրագրերը՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի բարելավմանը, մաշված սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրմանը, ինչպես նաև ընկերությունների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ներդրումների իրականացմանը: Հանձնաժողովը մշտապես ուշադրություն է դարձնում կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ուղղելու նպատակով:

Հաշվի առնելով վերը նշվածը, 2014 թվականին հանձնաժողովը կքննարկի և համաձայնություն կտա «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ» և «Միաջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների ներդրումային ծրագրերին, ինչպես

նաև կամփոփի ընկերությունների 2013 թվականի ներդրումային գործունեության արդյունքները: Քայլեր կձեռնարկվեն նաև բնագավառի կարգավորվող ընկերությունների հետագա զարգացումը խթանելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից տարվող հստակ քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն առաջընթացի մասին:

2013 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են 151 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 66-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 246 ՄՎտ, և դրանք միջին տարեկան հաշվով կարող են արտադրել շուրջ 746 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է 162 ՄՎտ, և սպասվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 558 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 217 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 408 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1,3 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2013 թվականին՝ մինչև սեպտեմբերի 1-ը, լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու և լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու համար հանձնաժողովը կայացրել է ընկերություններին ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 22 որոշում:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև իր կարգավորման դաշտում գործող հանրային կազմակերպությունների՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ԱրմենՏել» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող գնումների

արդյունավետությանն ու թափանցիկությանը: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով, իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը ներկայումս հրապարակվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների վեբ կայքերում:

Գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման և թափանցիկության ապահովման նպատակով մինչև 2014 թվականի առաջին կիսամյակի ավարտը հանձնաժողովը կսահմանի իր հաստատած ցանկում ներառված հանրային կազմակերպությունների գնումների կարգերին ներկայացվող նոր միասնական լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև այդ կազմակերպությունների գնումների գործընթացի մոնիթորինգի կարգ, որը կկանոնակարգի մոնիթորիգնի մեխանիզմներն ու գործիքները, իրականացման և արդյունքների հրապարակման պարբերականությունն ու ձևաչափը:

6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում կարգավորմանը վերաբերող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրված է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նշված ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Հիշյալ աշխատանքների իրականացման արդյունքում կրճատվել են էլեկտրա-էներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների

կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները և ներկայացման պարբերականությունները: Մասնավորապես, կրճատել են մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն ունեցող էլեկտրական էներգիայի արտադրության և էներգետիկայի բնագավառում կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները: Միևնույն ժամանակ, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կրճատվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները:

Ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան նաև 2014 թվականին:

Հաշվի առնելով, որ հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում ընդգրկված են տարաբնույթ գործունեություն իրականացնող ընկերություններ, հանձնաժողովը սկսել է կարգավորվող ընկերություններում հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլանների ներդրման գործընթաց: Այս ձեռնարկումը հանձնաժողովին հնարավորություն է տալիս կարգավորվող յուրաքանչյուր ընկերությունից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն, արագ և դինամիկ կերպով արձագանքել կարգավորվող ոլորտներում ընկերությունների կազմակերպահիրավական կառուցվածքների, նրանց գործառույթների շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և համարժեք փոփոխություններ կատարել հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում:

2013 թվականի ընթացքում հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ են ներդրվել գազամատակարարման համակարգի կարգավորվող ընկերություններում և, դրանց համապատասխան, լրամշակման փուլում են գտնվում ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ նախատեսվում է ներդնել նաև էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավորվող ընկերություններում:

2014 թվականի ընթացքում կարգավորվող ընկերությունները կներկայացնեն

հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան ֆինանսական հաշվետ-վություններ, որոնց հիման վրա կկատարվի նրանց ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում (www.psrc.am) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ

Հանձնաժողովի՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարմանն են ուղղված նրա հիմնական գործունեության ընթացիկ ուղղությունները:

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում որոշումներն ընդունում է նիստերի միջոցով, որոնք դռնբաց են և անցկացվում են ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Հանձնաժողովը նախապես հայտարարում է նիստերի անցկացման տեղի և ժամի մասին, հնարավորություն ընձեռում շահագրգիռ անձանց և հանրության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, ստանալ օրակարգն ու քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով: 2013 թվականի հունվարից 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում հրավիրվել է հանձնաժողովի 58 նիստ և ընդունվել 320 որոշում: Այս գործընթացը, բնականաբար, ունի շարունակական բնույթ և կիրականացվի նաև 2014 թվականին:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովը տարբեր կազմակերպություններից և անհատներից ստանում է տարաբնույթ գրություններ՝ պարզաբանումներ ստանալու կամ կարգավորվող ընկերությունների հետ առաջացած վեճերի լուծման վերաբերյալ: 2013 թվականի հունվարից 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում արդեն իսկ ստացվել է 3396 գրություն, որոնցում բարձրացված հարցերին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրվել են համապատասխան լուծումներ և պարզաբանումներ: Ընդհանուր առմամբ, այդ նույն ժամանակահատվածում տարբեր կազմակերպությունների և անհատների է ուղարկվել հանձնաժողովի 3651 գրություն: 2014 թվականին այս ուղղությամբ տարվող աշխատանքները, բնականաբար, կունենան

շարունակական բնույթ:

Հանձնաժողովում գործում է նաև «Հրատապ հեռախոս», որի միջոցով կազմակերպությունները և անհատները խորհրդատվություն են ստանում մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ: Հանձնաժողովը նաև «Հրատապ հեռախոսի» և իր էլեկտրոնային փոստի միջոցով ընդունում և պաշտոնական ընթացք է տալիս սպառողների հարցերին:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքը, որը միտված է հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը պատշաճ լուսաբանելու և հանրությանն առավել ընկալելի ներկայացնելու խնդրին: Շարունակելով զարգացնել թափանցիկ և հրապարակային աշխատառճը, 2014 թվականին հանձնաժողովը կփորձի առավելագույնս նպաստել հանրության բոլոր շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով գալիք տարվա համար ծրագրվում է առավել ակտիվ և նախաձեռնող մարտավարություն: Հանձնաժողովի դիտակետում կլինի հանրության հետ հետադարձ կապի ապահովման խնդիրը, սահմանված կարգով և ժամկետներում պատասխաններ կտրվեն բարձրացված գրավոր և բանավոր հարցերին, լրատվամիջոցների համար պարբերաբար կթողարկվեն համառոտ ծանուցումներ, կտրվեն մամլո հաղորդագրություններ, հանձնաժողովի նիստերի մասին ամփոփիչ տեղեկանքներ: Հանձնաժողովի գործունեության և հանրային ընկալման առումով հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին պաշտոնական տեղեկատվությունները կհրապարակվեն մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներով: Ինչպես նախորդ տարիներին, 2014 թվականին նույնպես տեղեկատվության տարածումն ընդգրկելու է հանրապետության ողջ տարածքը: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծությունը. հանձնաժողովի և կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները կներկայացվեն աշխատակազմին՝ դրանով իսկ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների և հանրության կարծիքն ու

գնահատականը:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, որոնց ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են հանրային շահի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը, ներկայացնում իրենց դիրքորոշումը, դիտողություններն ու առաջարկությունները: Նրանք մասնակցում են նաև հանձնաժողովի նիստներին և հարցերի ու ելույթների միջոցով ներկայացնում սեփական տեսակետը քննարկվող որոշումների առնչությամբ: Ավանդույթ դարձած երկխոսության այս արդյունավետ ձևաչափը շարունակություն կունենա նաև 2014 թվականին:

Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու կամ լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: Ակնկալվում է, որ 2013 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 6,5 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 5,5 մլրդ դրամը, կկազմեն ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը: Ըստ կանխատեսումների՝ 2014 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 6,4 մլրդ դրամ:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ոլորտային ծրագրերը

1. Էներգետիկայի բնագավառ

Էներգետիկայի բնագավառում մատակարար-սպառող հարաբերություններում առաջացած խնդիրների կարգավորման և սպառողների սպասարկման որակի բարելավման նպատակով 2013 թվականին մի շարք փոփոխությունների են ենթարկվել էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները:

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական

ցանցին միացման գործընթացի բարելավման, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ստեղծելու նպատակով հանձնաժողովը վերջին ժամանակահատվածում փոփոխություններ է կատարել իր նախկին որոշումներում, որոնցով նվազեցրել է էլեկտրական ցանցին միացման և մատակարարման պայմանագրեր կնքելու առավելագույն ժամկետները: 2013 թվականին ևս մեկ անգամ վերանայվել և հստակեցվել է էլեկտրական ցանցին միացման համար անհրաժեշտ գործընթացների քանակը, ինչպես նաև դիմողի կողմից մատակարարին ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Մինչև 2013 թվականի ավարտը հանձնաժողովը նախատեսում է ևս մեկ անգամ կրճատել էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման ժամկետները. մասնավորապես 0.4 ԿՎ լարմամբ էլեկտրական ցանցին միացման համար գործող 135 օր ժամկետը կրճատել 35 օրով և սահմանել առավելագույնը 100 օր:

Ներկայումս աշխատանքներ են տարվում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը բնական գազի բաշխման ցանցին միացման կանոնների լրամշակման ուղղությամբ: Դիտարկման փուլում են գտնվում բնական գազի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ քայլերի, գործընթացների համար սահմանված ժամկետների կրճատման, ինչպես նաև միացման վճարների սահմանման հարցերը: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2013 թվականի ավարտը, իսկ նոր համակարգն ամբողջությամբ գործողության մեջ դնել 2014 թվականի ընթացքում:

Միևնույն ժամանակ նոր սպառողների միացման գործընթացի հետագա բարելավման նպատակով 2014 թվականին հանձնաժողովը նախատեսում է աշխատանքներ տանել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների հետ՝ նոր սպառողների միացման և մատակարարման պայմանագրերի կնքման էլեկտրոնային համակարգերի ներդրման նպատակով: Նախատեսվում է, որ այդ համակարգերը կսկեն գործել 2015 թվականից:

Բացի վերը նշվածից, Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում հստակեցվել են կազմակերպությունների էլեկտրամատակարարման պլանային ընդհատումներին, վերջիններիս առևտրային հաշվառքի սարքերի առանձին տարրերի շահագործման պատասխանատվության, ինչպես նաև սպառողների առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում մատակարարված էլեկտրական

էներգիայի վերահաշվարկմանն առնչվող դրույթները:

Լրամշակվել է նաև բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը: Կազմակերպությունների համար նախկինում գործող երկու պայմանագրերի օրինակելի ձևերի փոխարեն հաստատվել է մեկ միասնական՝ բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը, որում հստակեցվել են մատակարարված բնական գազի դիմաց վճարման ժամկետները, առևտրային հաշվառքի սարքերի շահագործման ընթացքում կողմերի պատասխանատվությունը, խոշոր սպառում ունեցող բաժանորդների գազամատակարարման առանձնահատկությունները և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման դեպքերն ու կարգը:

Միևնույն ժամանակ շարունակվում է բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման գործընթացը՝ մատակարար-սպառող հարաբերությունների հստակեցման և շահերի հավասարակշռման նոր մեխանիզմների ներդրման նպատակով: Նախատեսվում է ամբողջությամբ լրամշակել գազի համակարգի անվտանգության ապահովման պայմանները, առևտրային հաշվառքի սարքերի տեղակայման, շահագործման և դրանց խափանման դեպքում մատակարարված բնական գազի քանակի վերահաշվարկման կանոնները, գազի մատակարարման և օգտագործման պայմանները, մատակարարված գազի հաշվառման և վճարման կարգը:

2014 թվականին հանձնաժողովը կշարունակի էներգետիկայի բնագավառում մատակարար-սպառող հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կատարելագործման աշխատանքները՝ առաջացած խնդիրների կարգավորման և սպառողների սպասարկման որակի բարելավման նպատակով: Այդ համատեքստում հանձնաժողովն արդեն իսկ համաձայնություն է ձեռք բերել Եվրոպական Միության հովանո ներքո գործող Ինոգեյթ կազմակերպության հետ սպառողների սպասարկման որակի՝ Հայաստանի Հանրապետությունում գործող ցուցանիշները Եվրոպական Միությունում գործող ցուցանիշների հետ համադրելու նպատակով միջազգային փորձագետների ներգրավման հարցում: Համադրման աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովը ձեռնամուխ կլինի իր ընդունած իրավական ակտերի համապատասխան փոփոխությունների փաթեթի մշակման և հաստատման աշխատանքներին:

2. Ջրային ոլորտ

Շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Ծիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տնողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման տնողության ցուցանիշները: Հաշվի առնելով նաև, որ սպառողներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներկայացվում են նաև հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի նվազագույն ժամերը, սպառողներն իրենք ևս հսկողություն իրականացնելու հնարավորություն ունեն մատակարարների կողմից հայտարարված ջրամատակարարման գրաֆիկների պահպանման նկատմամբ:

2014 թվականին հանձնաժողովը կվերանայի նշված հինգ ընկերությունների ջրամատակարարման տնողության փաստացի մեծությունները, ինչպես նաև կսահմանի այդ ցուցանիշների 2015 թվականի ծրագրային մեծությունները:.

3. Հեռահաղորդակցության բնագավառ

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ 2013 թվականին աշխատանքներ են տարվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, արդար և բաց մրցակցության երաշխավորման, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, որոնցից հատկապես կարևորվում են.

- հանրային շարժական բջջային կապի ծածկույթ չունեցող բնակավայրերը և միջպետական ավտոճանապարհների համապատասխան հատվածները

առնվազն մեկ օպերատորի կողմից ձայնային և շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցմամբ ապահովելու նպատակով հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 23-ին «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից իրենց հանրային շարժական բջջային կապի ցանցերը զարգացնելու և արդիականացնելու մասին» որոշման ընդունումը: Նշված որոշման համաձայն՝ օպերատորներն իրականացնում են հանրային շարժական կապի ծածկույթ չունեցող բնակավայրերը ծածկույթով ապահովելու, ինչպես նաև միջպետական ավտոճանապարհների ծածկույթ չունեցող հատվածների բացահայտման աշխատանքներ.

- շարժական կապի հեռախոսահամարների տեղափոխելիության համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Նշված աշխատանքների շրջանակում հատկապես կարևորվում է շարժական կապի հեռախոսահամարների տեղափոխելիության համակարգի ներդրման աշխատանքների համակարգման նպատակով համակարգող խորհրդի ստեղծումն ու հանձնաժողովի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի համարների տեղափոխելիության կանոնների ընդունումը.
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայությունների հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հրապարակվող տեղեկատվության ձևի լրամշակումը, որի հիմնական նպատակն է օպերատորների գործունեության մասին առավել թափանցիկ և հրապարակային տեղեկատվության ապահովումը.
- անալոգայինից թվային հեռուստառադիոհեռարձակման անցնելու գործընթացի շրջանակում՝ հանձնաժողովի կողմից 801-811ՄՀց և 842-852ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրման մրցութային գործընթացի կազմակերպման աշխատանքները: Հարկ է նշել, որ տվյալ գործընթացը հիմնականում նպատակաուղղված է հեռահաղորդակցության ոլորտի դինամիկ և համաչափ զարգացմանը, մասնավորապես, ՀՀ մարզերում

ենթակառուցվածքների զարգացմանը, մրցակցության խթանմանը և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ապահովմանը.

- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները դասակարգելու և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկաները սահմանելու մասին որոշման ընդունումը: Այն նպատակաուղղված է հստակեցնելու կարգավորման ենթակա շուկաների ցանկը, որի հիման վրա հանձնաժողովը կվերլուծի յուրաքանչյուր առանձին շուկան՝ պարզելու դրանում գերիշխող դիրքի առկայությունը և կիրառելու օրենքով ամրագրված պարտավորություններ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների նկատմամբ: Որոշման մշակման հիմքում դրվել են Ex-Ante կարգավորման ենթակա շուկաները սահմանելու վերաբերյալ Եվրոպական Միության գործող կարգավորիչ նորմերը:

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև մրցակցության զարգացմանը նպաստելու և տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու կարգավորման քաղաքականության արդյունքում 2013 թվականին՝

- Երևան քաղաքում ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը հասցվել է 100%-ի, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 87 %-ի.
- հանրապետությունում գործում են բջջային կապի փոխադարձ ներթափանցման ծածկույթ ունեցող 3G տեխնոլոգիայի վրա հիմնված երեք ցանցեր, որոնք 2014 թվականի ընթացքում կշարունակեն ընդլայնվել.
- Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում գործում են 4G/LTE տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցեր: 2014 թվականի ընթացքում նախատեսվում է դրանց ընդլայնումը նաև այլ բնակավայրերում.
- 2013 թվականի ընթացքում իրականացված լայնամասշտաբ աշխատանքների արդյունքում Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան, Հրազդան, Աբովյան, Աշտարակ, Չարենցավան, Արմավիր և Մեծամոր քաղաքներում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: 2014 թվականին այդ ցանցերի ներդրմանն ուղղված աշխատանքները կշարունակվեն նաև հանրապետության այլ մարզային բնակավայրերում.

- 2013 թվականի առաջին կիսամյակի դրությամբ միջազգային «ԱյՓի» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 73500Մբիթ/վ, որը 2012 թվականի համեմատությամբ աճել է 1.57 անգամ.
- մրցակցության արդյունքում միջազգային «ԱյՓի» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է նաև այդ ծառայության սակագինը: Մասնավորապես, 2013 թվականի առաջին կիսամյակում այն կազմել է 7600 դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով շուրջ 16%-ով.
- աճել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման ծավալները, որի բաժանորդների քանակը (առանց 3G/GPRS բաժանորդների) մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը կազմել է 446 525.
- նախորդ տարվա համեմատ 1.3 անգամ նվազել է հեռախոսակապի միջոցով (dial-up) ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը՝ 2013 թվականի առաջին կիսամյակում կազմելով 1924:

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, 2014 թվականին հանձնաժողովը շարունակելու է ոլորտում արդար և բաց մրցակցության երաշխավորման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության աշխարհագրության մեծացման և մատչելիության ապահովման, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

2014 թվականի ընթացքում շարունակվելու է ամրակցված հեռախոսային ցանցերի թվայնացման գործընթացը հանրապետության ողջ տարածքում:

2014 թվականին հանձնաժողովը հետևելու է «ԱրմենՏել» ՓԲԸ-ին տրամադրված լիցենզիայով ստանձնած պարտավորության՝ ՀՀ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսագծերի արդիականացման գործընթացին, որի արդյունքում հնարավորություն կընձեռվի տվյալ հեռախոսագծերով ստանալ լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ:

Հանձնաժողովն առաջիկա տարում հետամուտ կլինի նաև «Յուքոմ» ՍՊԸ-ին տրամադրված հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային կոդերի և նրանց համարային շարքերի զբաղեցման թույլտվության պայմաններով ամրագրված պարտավորությունների, մասնավորապես՝ ժամանակացույցով սահմանված

բնակավայրերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման և համապատասխան աշխարհագրական տարածքները հանրային ամրակցված հեռախոսային ծառայությունների մատուցմամբ ապահովման աշխատանքների պատշաճ կատարմանը:

2014 թվականին կշարունակվեն միջպետական ավտոճանապարհների հանրային շարժական բջջային կապի ծածկույթ չունեցող հատվածները նման ծածկույթով ապահովելու ուղղությամբ իրականացվող միջոցառումները: Մասնավորապես, օպերատորների չափումների արդյունքում բացահայտված միջպետական ավտոճանապարհների ծածկույթ չունեցող հատվածների վերաբերյալ տեղակույթի հիման վրա նախատեսվում է ընդունել որոշում, որի համաձայն հանրային շարժական կապի օպերատորները ցանցերի զարգացման և ծածկույթի ապահովման աշխատանքներ կիրականացնեն ավտոճանապարհների ծածկույթ չունեցող հատվածներում:

Հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի համապատասխան որոշման համաձայն՝ 2014 թվականին սպառողներին հասանելի կլինի շարժական կապի հեռախոսահամարների տեղափոխելիության ծառայությունը: Հաշվի առնելով վերոնշյալը, հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում առանձնակի ուշադրությամբ հետևելու է այս համակարգի և ծառայության աշխատանքին՝ գնահատելով նաև դրա ազդեցությունը շարժական կապի օպերատորների մրցակցությանը:

Նախատեսվում է նաև հետևողականություն ցուցաբերել 801-811ՄՀց և 842-852ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրման մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ընկերության սահմանված պարտավորությունների կատարման վերահսկման ուղղությամբ:

Հիմք ընդունելով հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 24-ի՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները դասակարգելու և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկաները սահմանելու մասին որոշումը, գերիշխող դիրքի առկայության ուսումնասիրության նպատակով, 2014 թվականին համապատասխան վերլուծություններ կիրականացվեն կարգավորման ենթակա առանձին շուկաներում՝ գերիշխող դիրք ունեցող օպերատորներին օժտելով օրենքով ամրագրված պարտավորություններով:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում դրա կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը մշտապես համագործակցում է տարբեր միջազգային կառույցների հետ: Մասնավորապես, մշտական համատեղ աշխատանքներ են տարվում Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի, Հեռահաղորդակցության միջազգային միության և Եվրոպական Միության հովանու ներքո գործող Ինոգեյթ ծրագրի հետ:

2014 թվականին նախատեսվում է հանձնաժողովի մասնագետների գործուն մասնակցությունը էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին, համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթության զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին:

Բացի այդ, ԱՄՆ-ի կարգավորողների ասոցիացիայի և Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ԱՄՆ-ի Այովա նահանգի կարգավորող մարմնի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև 2010 թվականի հունիս ամսին կնքված համագործակցության հուշագրի շրջանակում նախատեսվում է 2014 թվականին փոխայցելությունների միջոցով ուսումնասիրել երկու երկրների կարգավորման փորձը:

2012 թվականի թվականի ապրիլի 3-ին Ուկրաինայի կապի և տեղեկատվայնացման ոլորտում պետական կարգավորում իրականացնող ազգային հանձնաժողովի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակում, կարևորելով պետություններից յուրաքանչյուրի տնտեսական զարգացման վրա հեռահաղորդակցության ոլորտի ազդեցությունը, շուկաների մասնակիցների և վերջնական օգտագործողների, ինչպես նաև սպառողների շահերը, փորձի փոխանակման նպատակով կկազմակերպվեն կարգավորող մամինների աշխատակազմերի մասնագետների փոխայցելություններ: